

ՄԱՍԿ

Տարեկան դիմը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանց նամակները մեջ:
Ոտարարադրարցի դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Նամակները պետք է ուղարկվեն 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից):
Հայտարարությունները ընդունվում են ամեն լիզուով:
Հայտարարությունների համար գնորդում են
իրարանցիկ րատին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Էջմիածնի մասին:
Ներքին լուրեր — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ,
Ֆրանսիա, Գերմանիա — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ —
ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,
Այլազգային պատկերների հանդիսի մաս:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Էջմիածնի մասին

Էջմիածնայ և արդի Ընդհանրական Ս.
կաթնոլորտին կացությունն ու վիճակին
վրայ յաճախ գրած, ուշադրություն հրա-
ւիրած, զեղծ ու դարձան առաջարկած և
վեհ. Ս. կաթնոլորտին ազգասիրությունը
զիմած հեք՝ խնդրելով և պահանջելով որ
ազգային ընդհանուր դժգոհությունն և
զանգատանաց առիթ ընծայող պատճառնե-
րը բարձուն և առաջին տունուն այն
տխուր հետևանաց՝ զորս կրնայ նախատե-
սել ամեն անձ՝ որ քիչ շատ խորհելու և
դատելու կարողություն ունի:

Ազգային մամուլն առհասարակ՝ Մշակ, Մե-
ղու-Հայաստանի, Փորձ, Մասիս, Արևելեան
Մամուլ և Լոյս յիշեալ ընդհանուր դժգո-
հությունն և զանգատանաց նկատմամբ շատ
բան գրած և լուրջ ու կարևոր խորհրդա-
ծուծություններ հրատարակած են, և թէպէտ,
ցուպի է ըսել՝ այդ ամենը մեր ընդհան-
րական վեհ. կաթնոլորտին ու ի վարի մք-
ին առջև առանց ազդեցություն փնայած
են, սակայն հասարակաց կարծեացն առջև
և ջայն բարբառոյ յանապատի՝ դարձած չեն:

Այժմ կրնամք հաւատարմ կերպիւ ըսել
թէ նոյն ընդհանուր դժգոհությունն ու
զանգատներն իրենց վերջին աստիճանին

հասած են շնորհիւ Մանկունի եպիսկոպոսին
յամառ ընթացիկ և խաղացած դերերուն՝
որոց չափն ու ստհմանն անցած է, և չը կայ
չայ մը՝ ճշմարիտ չայ մը որ խորին ցաւ
ու մեծ վիշտ չը զգայ և նորա սիրան ար-
դար պայրոյթով չը լցուի, չը զգածուի և չը-
սէ, Աստուած իմ, ինչ օրերու հեք հա-
սեր, դեռ ինչե՛ր պիտի լսեմք արգեօք, ո՛ւր
է իջեր մեր Ընդհանրական կաթնոլորտու-
թեան վիճակն և ինչե՛ր արգեօք պիտի
գործեն տակաւին. . .

Ազգային շահուց թշնամի անձինք թո՛ղ
որչափ կուզեն խուսիլ ու բուրվառ ծխեն
Մանկունի եպիսկոպոսի առաջ, թո՛ղ որչափ
կուզեն սրբացնեն ու պանծացնեն նորա ա-
նունն և թո՛ղ որչափ կրնան չքմեղ հանել
ջանան արդի վեհ. Ս. կաթնոլորտին, որոյ
օրով ցաւալի է ըսել, ընդհանրական կա-
թնոլորտութեան շուքն ու անունը նսեմա-
ցած, նորա ազդեցութիւնը տկարացած, և,
ներուի մեղ ըսել՝ քա՛ր գա՛յ թ ա կ դ ու-
թ ե ա ն գ ա ր ձ ա ծ է. . .

Միայն մեք չեմք որ այսպէս կը դատեմք
ու կը խորհրդածեմք, այլ համայն թուր-
քիոյ Հայն ալ, Ռուսահայն ալ, Լիւթիսահայն
ալ և Պարսկահայն ալ այսպէս կը դատէ,
այսպէս կը խորհրդածէ, և մի և նոյն զգա-
ցումները կը տածէ ամեն Հայ, զի ճշմա-
րիտ Հայու մը զգացումներն այսպիսի յոյժ
կարեւոր խնդրոյ մը առջև ի հարկէ չը կրնար
տարբեր լինիլ, ի բաց առեալ այն մի քանի
անձինքն՝ որ անարգ շահախնդրութեան
համար ամեն բան զո՛հ կուտան, լոյսը կը
առեն, խաւարը կը պաշտեն, առաքինու-
թեան առջև խուլ և համր կը հանդիսա-
նան, մոլութեան կուռքին առջև ի ծունը
կիջնեն և ո՛ւր որ անիրաւ մամուլայի
անունը կայ, հոգեով մարմնով անդ են և

իրենք, զի այդպիսեաց բառարանին մէջ
ճշմարիտ ազգասիրութիւնն իւր թօ փ ի,
անկեղծութիւնը՝ ցնորք, առաքինութիւնն՝
ստուեր, բարեկամեցողութիւնը՝ տկարա-
մտութիւն և ազգային դործոց մէջ ան-
շահախնդրութիւնն՝ յիմարութիւն կը նշա-
նակէ, և սակայն այդ կարգի անձինք են
ընդհանրապէս որ անամոթաբար ձայն ու
աղաղակ կը բառնան, արդարութեան և
ճշմարտութեան դէմ ողով չափ կը մար-
տնչին, փառաբար անձնականութեան դէմ
կը յարձակին, անշահախնդրութեան և ան-
կեղծութեան դիմակի ներքև ամեն կերպ
չարիք գործելու կը ժպտնին, ժողովրդա-
կանութեան կեղծ՝ անունի տակ ազգային
կենսական շահի կը փտանգեն, և հա՛ս այդ
կարգի անձնաց աստուածը ոսկին և դար-
ձեալ ոսկին է:

Շատ չեմք ուզեր այդ կարգի անձնաց
հետ խաղալ, որք թէպէտ մութի մէջ կը
գործեն, այլ ժամանակն ամեն բան կը յայ-
տնէ, զի, ինչպէս յայտնի է, արդարութիւնն
տգան կամ անպան կը յայտնուի, ստու-
թիւնն ու կեղծաւորութիւնը կը խայտա-
ռակի և վտան ու փառութիւնը կը ճա-
նցուի, որովհետեւ արդարութիւնը չը յաղ-
թահարիր և որովհետեւ արդարութիւնն
անկման և անդրադարձութեան անկններ
ունի:

Անցնիմք մեր նիւթին և բացատրեմք թէ
ի՞նչ է մեր այս յոգուածին շարժառիթը:
Մեր այս յոգուածին շարժառիթը Մասի-
սի երեքշաբթի աւուր թուովն հրատարակ-
ուած մի տեղեկութիւն է, որ Մանկունի
եպիսկոպոսին մի նոր շահատակութիւնը
կը ծանուցանէ:

Մանկունի եպիսկոպոսին նկատմամբ այն
բուռնութենն ոչ պարմանալի կը թուին և ոչ

տարօրինակ բաներ են, ուշադիր ընթերցողք
կը յիշեն հարկաւ թէ Էջմիածնայ թեմերուն
առանց առաջնորդի ֆնայուն և առաջնորդա-
կան հասցիներն ուղղակի Էջմիածին պա-
հանջուելուն համար ասկէ առաջ քանիցս
հրատարակութիւններ ըրած և առաջնոր-
դական խնդրոյն կարեւորութիւնն և ժողո-
վուրդն առանց առաջնորդի թողելուն
փնասակար հետեանքները բացատրելով՝ Ն.
վեհ. Սրբազնութեան ուշադրութիւնն հրա-
ւիրած էինք, յուսով թէ իրրե հայր հա-
սարակաց Ն. Ս. Սրբութիւնը կը բարեհա-
ծի այս մասին պարտ ու պատշաճն ի գործ
գնել և հետեւաբար ընդհանուր դժգոհու-
թեան և զանգատանաց գէթ մասամբ ա-
ռաջքն առնուլ:

Յաւալի է սակայն որ անշուշտ Մանկու-
նի եպիսկոպոսին հնարքներուն ազդեցու-
թեան շնորհիւ ուշադրութիւն չը դարձուց
վեհ. Ս. Հայրապետն, և ահա իրաց վի-
ճալը սոյն տխուր հետեանաց յանգեցաւ
ի մեծ ցաւ ճշմարիտ ազգասիրաց, և չը
զիտեմք տակաւին թէ գործոց եղբայրացու-
թիւնն ո՛ւր պիտի յանգի, բայց սա ստոյգ
է և ճշմարիտ թէ Մանկունի եպիսկոպոսը
շատ զերբաւ պիտի չը կրնայ Պոյիս չուե-
լու, մինչև որ Էջմիածնայ հաշիւներն ամ
բողջովին չը կարգադրին օրինաւոր կերպիւ:

Մասիսի հետեւալ գիտողութիւնը մենք
ես խիստ արդար և իրուացի կը գտնեմք,
և կը զարմանանք թէ Ազգ. ժողովն ինչու
մինչև հիմայ իւր ձայնը չը բարձրացուց:

Մասիս իրաւամբ կրնէ «Ըստ մեզ» Կ.
Պոլսոյ Ազգ. Վարչութեան և մանաւանդ
Ս. Պատրիարքին անհրաժեշտ պարտա-
ւորութիւնն է՝ ապահով միջոցներով ստուգել
այս տխուր կացութիւնն, և ընդհանուր
ազգին ուշադրութիւն հրաւիրել վեհ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Յ. Կ. ԱՅՈՎԱԶԵԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԱՆԳԻՍԻ
ՄԱՍԻՆ

Երկու շաբաթ դրանից առաջ ռուս լրագրի-
րում ես մի յայտարարութիւն կարդացի թէ՛ Ս.
Պետերբուրգի քնակիչ պ. Լ. Մադրիսեանցը ձեռ-
նամուկ է եղել հրատարակելու իր հուշակաւոր
քեռուոյ՝ պրոֆեսոր Այվազեանի գեղարուեստա-
կան պատկերների fac simile օլեօգրաֆիկական
արտատպերը (снимки), որոնց երկուսը, այն է՝
X. Колумбъ на пути въ Америку և Торжест-
венное вступление Колумба на о. Сансальва-
доръ, ինչպէս խոստանում է յարգելի հրատա-
րակիչը, լոյս կը տեսնեն ներկայ տարուս, օգոս-
տոս ամսին:

Պէտք է տեսլ, որ ես բաղդաւորութիւն ունե-
ցայ մի քանի անգամ անձամբ յաճախելու մեր
հայադն նկարչի պատկերների վերջին աշխարհա-
հանդէսը, որ սկսեալ անցիալ տարու նոյնմիտի
28-ից, երկու ամիս շարունակ բաց էր մայրա-
քաղաքիս բոլոր հասարակութեան համար և
արդէն կազմել էի տեսածիս մի համառօտ նկա-
րագրութիւնը «Մշակին» ուղարկելու. բայց տա-
րարադրաբար, մինչև այսօր չը յաջողեցաւ ինձ
կատարել իմ դիտարկութիւնս: Այժմ պ. Մադրի-

րեանցի գովելի ձեռնարկութիւնը առիթ է տա-
լիս ինձ ծրարել, վերջապէս, մի կողմ իմ դան-
դաղութիւնս և զրիչ վերցնել. սակայն ուշադա-
րաւ պատճառը դանդաղութեամբ մեկնել՝ մտեր-
մութիւն չէ. այսպէս խօսել-նշանակում է ճշմար-
տութեան դէմ մեղանշել, ուստի հրապարակօրէն
խոստովանում եմ, որ միայն համեստ երկրա-
ծութիւնն է, որ, այսպիսի ծանր գործառնու-
թեան սկզբում, զինաթափ էր անում ինձ: Կա-
մենալով հազարդել «Մշակի» ընթերցողներին իմ
անձնական տպագրութիւնները վերջացած աշ-
խարհահանդիսի վերաբերութեամբ և ըստ կարո-
ղութեան չափ տալ մի քանի տեղեկութիւններ
մասին, որոնց օլեօգրաֆիան կովկասցիներից
չառերը, զուգէ, կը տեսնեն օգոստոսին, ևս ոչ
միայն չեմ յանդգնի խորհնացու նման ասելու
միայն թէ և շնորհակալ ոք մերոց գտանիցի
լեալ աշխատութեանց, այլ և խոնարհաբար կը
խնդրեմ մեր հայ հասարակութեանը ներողամիտ
լինել դէպի իմ տկար ոյժերս:

Այցելելով պրոֆեսոր Այվազեանի պատկեր-
ների աշխարհահանդէսը և հիանալով նրա սքան-
չելի արտադրութեանց վրա, որոնք միանգամայն
ապշեցնում են գննողին, որչափ իրանց բանաս-
տեղական գեղեցկութեամբ ու տեխնիկական
կատարելութեամբ, նոյնչափ և ճշգրիտ կենդա-
նութեամբ, մարդս ակամայ պիտի բացականչէ՝
չը կայ, և երբէք չէ եղել ոչ թէ Ռուսիայում, այլ
և բոլոր Եւրօպայում այնպիսի մի նկարիչ, որ
իր կեանքի ընթացքում զրէր այնքան շատ
պատկերներ, ինչքան Այվազեանը և որ մի և

նոյն ժամանակ անդադար զարգացնելով իր
բնածին տաղանդը, երկարատեւ գործունէութիւ-
նից յետոյ, հասցնէր դրան այսպիսի փառահեղ
կատարելագործութեան:

Այդ զարմանալի հանձարի ոյժը, որ համեմա-
տաբար նրա վաղեմի արժանաւորութեանց հետ,
չէ սպառվում, այլ ընդհանրապէս, ես առաւել
չարունակվում է աճել, ստեղծելով իր պատկա-
ռելի հասակում նոր իմն բաներ, արդարեւ, ան-
օրինակ է: Այվազեանի վերջին աշխարհահանդէսը
ցոյց տուեց միզ, որ ճշմարիտ տաղանդի համար
սահման չէ սրելված. գրեթէ բոլոր պատկերները
գրված են այնպիսի ճարպիկութեամբ, շատերի
վրա մշակված են այնպիսի նուրբ և վսեմ շար-
ժառիթներ, որոնց նմանը մինչև այժմ դեռ չէր
նշմարվում նրա առաջվայ պատկերների վրա:
Բայց կտաւի վրա նկարելու համար ծովը, օդը
և առհասարակ լոյսը, սրա պէսպէս փոփոխու-
թիւններով հանգերձ այն կատարելութեամբ,
ինչպէս արել է Այվազեանը, հերիք չէ միայն
տաղանդ ունենալը, այլ հարկաւոր է նաև գե-
րագոյն արուեստականութիւն (техника), որ
մատչելի է լինում մարդուս միայն ամենադաւն
և տաժանելի աշխատութիւններից և այն էլ ոչ
միշտ:

Ճշմարիտ է Այվազեանը չէ ուսումնասիրում
բնութիւնը առանձին էտիւդներով և ոչ էլ լոկ
արտադրում է այն. նրա աշխատութեան գլխա-
ւոր արժանաւորութիւնը դրա ներքին յատկու-
թիւնն է: Իրրե բանաստեղծ բառիս բուն նշա-
նակութեամբ, մեր երեկի նկարիչը կենդանագ-
րում է բնութեան զմայլեցուցիչ գեղեցկութիւն:

Ներք, այնպէս, ինչպէս դրանք տպագրված են
նրա վերին աստիճանի նուրբ հոգու մէջ. նա
զգում է և ըմբռնում է բնութիւնը ուժգնաբար,
խորունկութեամբ. նա խորատոյգ է լինում սրա
հրապարակաց մէջ իր բոլոր էութեամբ և յե-
տոյ շնորհիւ իր զարմանալի յիշողութեան, վրձնի
միջնորդութեամբ յանձնում է իր տպագրու-
թիւնները կտաւի պարզ անկեղծութեամբ, ա-
ռանց երկար ձգձգելու: Ահա դոյն անկեղծու-
թեան մէջն է կայանում նրա գերահուշակ հան-
ձարի բոլոր ոյժը, նրա ահագին, գրեթէ, անօրի-
նակ ժողովրդականութիւնը, որ մի քանի տաս-
նակ տարիներից յետոյ էլ հեռու տարածված է
Ռուսիայի սահմաններից դուրս, իսկ կէս դարու
ժամանակամիջոցում անխոնջ վատաւելով մշակած
արուեստականութիւնը նրան կարողութիւն է
տալիս, ինչպէս վերը յիշեցի, հնչողութեամբ մի
առ մի զրոյմել կտաւի երեսին իր զգացած
տպագրութեանց մանրամասնութիւններ:

Գիտողութեան արժանի է այն իրողութիւնը
որ աշխարհահուշակ մարինիտը *) ծնաւ և ա-
նուանի դարձաւ այն ժողովրդեան մէջ, որի հա-
մար ծովը ոչինչ նշանակութիւն ունեցող տարր է.
ծովիւր կից են միայն Ռուսիայի հեռաւորագոյն
կողմերին, որոնք նուաճված են ընդամենը 100
կամ 150 տարի դրանից առաջ. բնական է, որ
ռուս ժողովուրդը, մինչև անգամ մեր օրերում,
չէ թէ տէր, այլ հիւր է դեռեալ Բալտեան և Սև
ծովի ափերում: Չունենալով իր ազգային բա-
նաստեղծութեան մէջ առձեռն, պարտաւտ տի-

*) Մովսիսի տեսարաններ նկարող:

Կաթողիկոսին ամենացաւալի և անակնկալ հիւանդութեան և լքմիածնի վտանգալից կացութեան վերայ, փասն զի Կաթողիկոսին հիւանդութիւնն, եթէ ստոյգ է, առաւել փնտրեալ է ազգին՝ քան թէ նրա փառ- ճանուարը։

Կարձեալ կասեմք, եթէ ստոյգ են այս տեղե- կութիւնք, ազգը պարտի աճապարիւ ապահո- վելու լքմիածնայ Կաթողիկոսութեան վարչա- կան գործոց վիճակը, փասն զի լքմիածնի բոլոր իրաւունքները կրնան փոխանցուիլ հանդիպելու և այնուհետեւ ազգին ամեն ջանքն ու աշ- խատութիւնք կարող չը լինին եղած փնտ- ները դարձանելու։

Եւ մեք կաւեցնեմք ըսել՝ գոգցես բնու- թիւն դարձեր է մեզի որ և է ծագելիք փնտքէ կամ փոխքէ առաջ անտարբեր մը- նալ, ամենկեպ նախատեսութեան, զգուշու- թեան խորհրդոց և անկեղծ դիտողութեանց կարեւորութեան չը տալ, և երբ ոմանց կողմէ նախատեսալ փնտք կամ փոխքն յառաջ գայ, այն ատեն յուզիլ, իրար անցնիլ և բարձրագոյն գոտում գոչութենով ու աղա- զաններով օղբ թնդացնել։

Գուցէ ծանր թուին մեր այս մի քանի տողերը, բայց զմեզ մեղադրելու իրաւունք չունին, զի մեր դիտել տուած կէտը բացա- յայտ իրողութիւն մ' է փորձառութեան վրայ հիմնեալ է, և երբ իրողութիւնը կը խօսի, կանխակալ կարծիքներ պէտք է լը- առնել։

Ո՞վ գիտէ թէ Մանկունի կալիսկոսոս ին- չեր չէ գործեր՝ որք դեռ ծածկուած կը մնան և Ազգին (պաշտօնական մարմնոց) թուլութիւնէն խրախուսեալ՝ տակաւին ին- չեր պիտի չընէ և ինչ գերեր չը պիտի խաղայ Ազգին գլխուն։

Մեք իրեւ հրապարակի մարդ՝ ազգային սոյն կենսական խնդրոյն նկատմամբ Այսի մէջ մեր կարծիքն հրապարակաւ յայտնելը բաւական չը համարելով՝ որոշած եմք Ազգ- ժողովոյ մէջ ալ հարցում ուղղել առ Ազ- գային վարչութիւնն, բացատրութիւն խնդ- րելու համար թէ ինչ ըրած է այս մասին, ինչ կը խորհի, որպիսի տեղեկութիւններ ունի, և ինչ պիտի ընէ։

Ինչպէս որ կը պահանջէ մեր ազգային շահը, մեք այս մասին լռելի չը պիտի դադրեմք, մինչև որ գործոց վիճակը պար-

զուի, օրինաւոր համարադրութիւն լինի և օրինաւոր հսկողութիւն ի գործ դրուի, որովհետեւ լքմիածնի Ս. Կաթողիկոսը թէ- պէտ Ազգին ընդհանրական Կաթողիկոսն է, սակայն Ազգին առջև պատասխանատու- թիւնէ ազատ չէ երբեք և չը կրնար լինիլ քանի որ Կաթողիկոսութիւնն Ազգինն է և միայն Ազգը բացարձակ աէր է ազգային ամենայն շահուց և իրաւանց, և հետեւաբար Կաթողիկոս, Պատրիարք, Առաջնորդ, Վար- զապետ, Փաշանայ և Սարկաւագ ազգային — եկեղեցւոյ մէջ պաշտօնականներ են, ազ- գային և եկեղեցւոյ նախնական շահին ու իրաւունքներն անվճար պահպանելու պաշտօն և պարտականութիւն ունին, և ոչ թէ ըստ հաճոյս գործելու և շարժելու ազատ են։

Այնպիսի բացարձակ ազատութիւն արը- ուած չէ և ոչ մէկուն, և հարկաւ չը կրը- նար տրուիլ, քանի որ այդ պաշտօնականները մարդ են, որք կրնան սխալիլ, և հետեւա- պէս Ազգին և եկեղեցւոյ մեծ փնտ հասց- նել՝ աղէկ ընելու նպատակաւ, որ անակն- ունելի չէ։

(Լոյս)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակ» № 90-ի մէջ տպւած է լքմիածնի պրո- կուրորի նամակը բացատրութիւն է տալիս լք- միածնի գումարների գործադրութեան մասին, բայց զարմանալի է որ պ. պրոկուրորը իր նա- մակի մէջ յիշում է միայն 1866 և 1867 թւերի հաշիւները, իսկ հետեւալ տարիների գումարնե- րի մասին յայտնի չէ ինչի լուծում է։

Հայերը զարմանալի մարդիկ են. գրում են հայ լրագրին մայիսին, փոխանակ յունվարին, կամ մինչև անգամ նախընթաց տարվայ դեկտեմ- բերին գրելու, — և յետոյ դժգոհ են, որ նրանց չեն ուղարկում ամբողջ տարվայ համայնքը ըս- կզրից։ Եթէ կամենում էք ամբողջ տարվայ հա- մայնքը ստանալ, պէտք է վաղօրօք գրելք և ոչ թէ մայիսին գրելով՝ պահանջէք յունվարի համայնքը։ Մենք «Մշակը» ճշմարիտ է տը- պում ենք փոքր ինչ աւելի քան թէ բաժա- նորդ ունենք, բայց չենք կարող յունվա- րին հոգով սրբով խնայել որ մայիսին գրողները կը լինեն ամբողջ տարվայ համար։ Բաժանորդ- ների թիւն աւելանալով, աւելացնում ենք և օ- րինակներ թիւը, բայց այն բոլորից, երբ նոր բաժանորդներ ենք ստանում, և ոչ թէ առաջին

որ ոչ թէ տարիների ընթացքով չէ նստմանում, այլ քանի դնում տարածվելով աճում է զուգա- հաւասար նրա զարգացող և կատարելագործվող արուեստականութեան հետ։

45 տարի շարունակ վայելելով հասարակու- թեան սէրը, Ալվաղեանը մինչև այժմ էլ մնաց նրա համար իրեն ամենահամակերելի նկարիչ։

Յառաջ քան մամուլը խօսքս երկու վե- րոյիչաւ մեծ պատկերների վրա, որոնք ներկա- յացնում են Ամերիկայի գիւղեր, պարտք եմ հա- մարում ասել, որ Ալվաղեանը իր ազգայն ար- տագրութեանց համար նիւթեր ժողովելու գի- տաւորութեամբ նախ երկու տարի ճանապար- հորդեց Իտալիայում և յետոյ իր սովորական, անընկճելի յամառութեամբ ձեռնամուկ եղաւ գործին։ Նրա վրձինը, որ շատ էր աշխատել ծովային տեսարաններ նկարելու, այս անգամ պահանջում էր աւելի լայն գործադրութիւն և մեր երեւի մարինիտը միտք յղանալով նոր իմն անջնջ յիշատակ թողնել գեղարուեստա- կանութեան պատմութեան մէջ, ներդաշնակեց ուղիւնստի տարրական երեւոյթները այն պերճ և յանդուգն նաւավորի անուան հետ, որ նոր աշխարհ գտնելով, պատճառ դարձաւ նոր դա- րաշրջի հաստատման ազգերի պատմութեան չը- ջանում։

Այս պատկերները X. Колумбъ на пути въ Америку и Торжественное вступление Колумба на о. Сансальвадоръ անգլիան պատմական նը- շանակութիւն ունեն ոչ լոկ զրա համար, որ նիւթերը պատմական են կամ կոլումբոսի և նրա ուղեկիցների պատկերները ժամանակակից ըն-

համարից, որ նորից չարել ու տպել չենք կարող։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԴԻՑ մեզ գրում են. «Մասի- սի» յօդուածը, որ արտատպւեցաւ «Մշակի» մէջ և որի նպատակն էր հաշիւ պահանջել լք- միածնից, մեծ ներգործութիւն ունեցաւ այստե- ղի մի անձի վրա, որի մասին ակնարկութիւն կար, թէ նրան յանձնվում են լքմիածնի փո- ղերը Բօրսալում խաղալու համար։ Այդ անձը որոնում է՝ այժմ մի գրող, որպէս զի պատաս- խանի «Մասիս» լրագրին, անգագար կրկնելով թէ՛ ինչ փող, ինչ լքմիածին, ինչ կրեւտ, օրոն- ղից, ուր...»

Կեզ գրում են ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ հետեւալով. «Այս- տեղի փոստատան մէջ զարմանալի բաներ են պատահում. փոստատան ծառայողները երբ մի գիրք են հաւանում որ ուրիշ քաղաքից է ստաց- ված, փոխանակ տիրոջը յանձնելու այդ գիրքը, առանց այլ և այլութեան իրանց համար են պա- հում։ Երբ նամակի ծրարից զգում են որ նրա մէջ ֆոտոգրաֆիական պատկեր կայ, բաց են անում նամակը և լուսանկարը իրանց համար են պահում։ Ես կարող եմ այն տիկիներին և պարոններին ազգանուններն ասել, որոնց անու- նով ուղարկված գրքերն ու լուսանկար պատ- կերները փոստատան ծառայողներին մօտ մնա- ցին, փոխանակ յանձնված լինելու իրանց տէրե- րին։ Եթէ փոստատան կառավարիչը համարձակ- վի հերքում գրել «Մշակին» այն ժամանակ ես կը յայտնեմ այն անձերի ազգանունները, որոնց սեփականութիւնը փոստը իրան է սեփականաց- րել։ Քաղաքի շատ նշանաւոր մարդկանց հետ փոստատանը չէ համարձակվում այս տեսակ բա- ներ անել, այլ միջին դասակարգի մարդկանց հետ։»

ՇԱՄԱԽՈՒՅ մեզ գրում են. «Ապրիլի 4-ին Շամախի եկան երկու հոգի միտիօնարական ըն- կերութեան քարոզչներից, որոնցից մինը ամե- րիկայի էր և թուրքերէն լեզու լաւ խմացող՝ իսկ միւսը թուրքիացի հայ պ. Գլիգորեան։ Գալուց յետոյ մի քանի օր Գլիգորեան հայերէն քարոզ- ների մի շարք սկսում է կարգաւ հայ-բողոքա- կանների ժողովաւորում։ Նրա քարոզները այն- քան ճարտար և գրաւիչ են լինում որ ժողովա- րանը լցվում է ոչ թէ միայն հայ-բողոքական- ներով և հայ-լուսաւորչականներով, բայց և ուսուստիստներով, որոնք և նրանց թը- ւում քաղաքագլուխը ներկայ են գտնվում այդ քարոզներին։ Մի անգամ ես ամերիկացին քա- րոզից թուրքերէն լեզուով քարոզին ներկայ էին և բազմաթիւ թուրքեր։ Քարոզչները իրանց ատենախօսութեան նիւթը թէն վերցնելով սուրբ գրքերից, առաւել իրական կեանքի մտաւոր և բարոյական պահանջների վրա էին խօսում։ Մա-

տիկ պատկերներից են արտագրված, իսկ նաւե- րի արտաքին տեսքը ճիշդ մոզէլներէից, ոչ, այլ գրա համար, որ Ալվաղեանը ինքն զգացել է և քաջ ըմբռնել Կոլումբոսի սրտի կոկիծը, ուրա- խութիւնը, կենդանի ներկերով նկարել է բոլոր սարսափելի խաչնդոսները, որոնց աշխարհա- հաշիկ նաւավորը հանդիպում էր իր նաւագ- նացութեան միջոցին և այն անուանման և խորին հոգեզնայլութիւնը, որ փայլում է նրա երեսին իր քաղցր նպատակին հասնելուց յետոյ։ Ոչ մի ուրիշ գրաւոր նկարագրութիւն այսքան պարզ գաղափար չէր կարող տալ Կոլումբոսի կատարած փառահեղ մեծագործութեան և կրած բազմաթիւ փոխանցների մասին, որոնց զէմ վիճակված էր նրան անդադար մաքառելու։ Առաջինը, յիշեալ երկու հսկայական պատկերներից, ներկայաց- նում է ամերիկացի ծովը և արեւիկոթութիւնը. ա- հագին կոհակները ուղարկվով պատկերի մի ծայ- րից զէպի միւսը, կարծես, պատրաստ են կտա- լից դուրս ցայտելու. մօտայլ երկինքը պատած է մութ ամպերով. ուղիւնստը իր անյատակ խո- րութեամբ, անվերջ ճորիգներ, երկինքը մի անհղ գծովային խառնուրդ են ձեւացնում։ Կոլումբոսի Santa Maria նաւը այնքան յարմար յորինված է պատկերի վրա, որ նա բոլոր տախտակաւա- ծով գնողի աչքին է ընկնում. ալեքսերի ուժգին հարուածը նրան սաստիկ խոնարհել է մի կողմ և ջրի փրփրով սրսկել է մի քաղէ և նաւը կորցնելով իր հաւասարակշիւթիւնը, անշուշտ, պիտի խորտակվի անդունդի մէջ, որ մի քանի հա- րիւր անմեղ զոհերի հետ կհանելու է և նաեւ գե- րահաշիկ նաւավորի հիւնաւրի գաղափարը։ Տախ-

յիսի 11-ին պարոնները միկնեցան քաղաքից։

Ս. Պետրբուրգի լրագրներում կարդում ենք պաշտօնական հերքումն այն լուրի, իրը թէ Գէ- սէ Գեւորման վիժել է երկխային։ Բժշկների քնն- նութիւնից երեւում է որ նրա յղովիւնը չարու- նակում է իր բնական և կանոնաւոր զարգա- ցումը։ Պաշտօնական հաղորդութիւնից երեւում է որ կալանաւորվածի հետ շատ լաւ են վարվում բանտի մէջ։

Լրագրները հաղորդում են որ մայիսի 15-ին Ս. Պետրբուրգի քաղաքագլուխը ընտրվեցաւ Գը- լադուհով։ Միւս կառիւղաւորները հրաժարվեցան քաւարութեանից։

Յիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ այ- սօր, մայիսի 23-ին լինելու է Աթորուտ թատ- րօնում թիւրքաց Հայաստանից այս օրերս վե- րադարձած պ. Ռոմանիսեանի դասախօսութիւնը հայերէն լեզուով։ Թիւրքաց Հայաստանի, մա- սին։ Պ. Ռոմանիսեան ցոյց կը տայ իր դասա- խօսութեան ժամանակ թէ վանի կողմերի և թէ Գլիգորեանի հայերի գործած կերպաները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԲԱՆՍԻԱ

Նորերում Մարսելի մէջ կ'օճենիստների մի ցոյց կատարվեցաւ Գեսա Գելֆանի մահուան պատիժը արգելելու նպատակով։ Ինչպէս հաղորդում են լրագրները, թէ- պէտ այդ նպատակով ժողովը արգելեցաւ Ֆրանսիական պօլիցիայից, բայց այնուամե- նայիւ կ'օճենիստների ցոյցը կայացաւ և աւելի մեծ չափեր ունէր, քան թէ նա նը- կարագրված էր Ֆրանսիական պաշտօնական հաղորդութիւնների մէջ։ Չը նայելով պօ- լիցիայի արգելմանը, այն տան առաջ, որ- տեղ պէտք է կայանար այդ ժողովը, հա-ւաքվեցաւ մօտ 3,000 մարդ, որոնք սկեմ- ցին կուռել պօլիցիայի հետ, այնպէս որ հարկաւոր եղաւ զօրքերի միջամտութիւնը։ Այդ ցոյցին մասնակցողները մի քանի խում- բերի բաժանվեցան, երբ եկաւ յայտնի Պա- ուլա Մինի-կոմունիստ կինը և ամբոյի գլու- խը անցաւ։ Նրա առաջնորդութեամբ աւ- բոյր յեղափոխական ազադակներով անցաւ քաղաքի մէջ։ Հրապարակի վրա խումբերը նորից միացան և մի քանի անձներ սկսեցին

տակամամին տիրել է կատարեալ տագնապ և ա- պստամբութիւն. նաւատորները աշխատում են պինդ բռնվել շուաններից, որ չը գլորվին ջու- րը, մի բանիստները անճարացած ընկած են, ու- րիշները որոտմութեամբ լի մերկացրած սրբով յարձակվում են Կոլումբոսի վրա, որի բարձրա- հասակ և փառաւոր կերպարանքը արժանացած կանգնած է նաւի մի ծայրում. նա այդ միջոցին ցոյց է տալիս (նոցա) ձեռքով՝ ծածանալով դո- շակի վրա, ուր փրկչի խաչելութիւնն է նկար- ված, որով, ինչպէս յայտնի է պատմութիւնից, Ապսիլիայի թագուհի Իզաբելլա Կատարեալը բարի ճանապարհ և յաջողութիւն մաղթեց Կո- լումբոսին։ Ամենայն տեղ մահ և յուսահատու- թիւն է թագաւորում։ Բայց այն իրողութեան մէջն էլ դարձեալ երեւում է նկարչի բանաստեղ- ծական հոգու նրբութիւնը. մինչև անգամ իր սիրե- ցեալ տարրի սարսափելի ալալութեան մէջ ես նա գիտէ ընտրել միշտ գեղեցիկը ինչպէս, օրինակ այս լուսաւոր նշոյլը, որ ձեղքելով մը- աւալ ամպերը, ընկնում է նաւի վրա և լուսա-ւորում է տախտակամածը և ալիքները, պատկե- րի վրա առաջին տեղն է բռնում. դա այնպիսի վարպետութեամբ նկարված է, որ այցելուները չափերը, ցերեկով, սխալմամբ ընդունում էին նրան պատուհանից ներս մտնող արիւթալից Գէ- ծի տեղ. այս նշանը, կարծես, մի կերպ նախա- դուշակում էր, որ Կոլումբոսի կորովի օգին ո- ղորմութեամբ Աստուծոյ յաղթող պիտի դուրս գայ մահ և յուսահատութեան անդունդը։

Երբեք Ալվաղեանը, ալեկոծեալ ծովը նկարե- ի, զեւ չէր հասել այնքան կատարելագործու-

վրդովեցոցիչ ճառեր կարգաւ Այդ ճառերի բովանդակութիւնը անկարելի է պատմել: Այդ տեղ կարգացվեցաւ Բօշփօրի նամակը, որով նա հրաժարվում էր ժողովին նախագահելուց: Պառլամենտի մի վրդովեցոցիչ ճառ կարգացեալ, վերջնելով կարմիր դրօշակը, Մարտիկի կրօն ամբոխին առաջնորդեց զէպի ուսաց հիւպատոսի տունը: Ամբոխից մի մարդ առաջարկեց հիւպատոսին պատանդ վերցնել, բայց այդ առաջարկութիւնը չիրագործվեցաւ:

Փարիզի մէջ հաւատացած են, որ թիւրքիայի բողոքը Տունիսի խնդրի վերաբերութեամբ Անգլիայի և խաղիայի ազդեցութեան հետեանք է: Իսկապէս դիպլոմատական շրջաններին մէջ այդ բողոքին ոչինչ նշանակութիւն չեն տալիս: Աւստրիան և գերմանիան Տունիսի խնդրը վերջացած են համարում: Տունիսի թափառական ցեղերին առաջարկած խաղաղական պայմանները հեռեկաններն են: Նրանք պէտք է յանձնեն իրանց զենքերը Ֆրանսիացիներին, պէտք է օգնեն Ֆրանսիական զօրքերի համար պաշարներ, ջօրներ և սայլեր գտնելու: Ֆրանսիացիները կը վերադարձնեն պատանդներին, ծերերին և կանանց, և նրանց կը թողնեն իրանց նախկին բնակութեան տեղը:

Ֆրանսիական պատգամաւորներին ժողովի մէջ ընտրողական հարցի մասին վիճարանութիւններին ժամանակ խօսողներէց ոչ մէկը նոր բան չստաց: Գամբետայի ճառը 1½ ժամ տեւեց և, երբ վերջացաւ, ժողովը նրան գրեթէ միաձայն ծափահարեց: Ի միջի այլոց նա ասաց. «Խնդրեմ հաւատացե՛ք, որ ես չեմ մասնակցում վիճարանութիւններին ինչ վրա բարձած մեղադրանքների դէմ բողոքելու համար: Յոյս ունեմ, որ ինչ հարկաւոր չէ արդարանալ ոչ ժողովի և ոչ երկրի առաջ այն դիտաւորութիւնների մասին, որոնց ինչ վերաբերում են և որոնք յանցաւոր կը լինէին, եթէ կատարելապէս անհիմն չը լինէին: Ես նրանց յիշեցի, որպէս զի վերջ գնեմ այդպիսի խօսակցութիւններին, որոնք անվայել են հանրագիտակցանքների համար: Ընտրողական ինչ տեսակ ձե ևլ գուք ընտրե՛ք, հաւատացե՛ք, որ ես երբեք չեմ մասնակցի ընտ-

րողական խնտրիդներին, որոնք անվայել են թէ ինչ համար և թէ իմ կուսակցութեան համար»:

ԳԵՐՄԱՆԻԱ

Լրագրիւնների մէջ կարգում ենք հետեւեալ տեղեկութիւնները: Իշխան Բիսմարկի առաջարկած վարչական միջոցները Համբուրգ քաղաքը ստիպմամբ գերմանական մաքսային դաշնակցութեան մէջ մտցնելու մասին նոյն անբաւականութիւնը յարուցեց պարլամենտի և միացեալ խորհուրդի մէջ, ինչ որ անցեալ տարի: Նախկին մինիստր Գերլերի և առաջարկեց, որ մաքսային սահմանները կարելի է փոփոխել միայն օրէնքի համեմատ: Առաջադէմները ապատմաներից պաշտպանված առաջարկեցին պաշտպանել պարլամենտի և միացեալ պետութիւնների սահմանադրական իրաւունքները միացեալ խորհրդի կամայականութեան դէմ:

Ներկայումս պարլամենտը բնութմ է մի օրինագիւծ արդիւնաբերական ընկերութիւնները վերականգնելու մասին: Ազատամիտները մեծ գծաւարութեամբ կարողացան մերժել օրինագիւծ այն յօդուածները, որոնք իրաւունք տալով ընկերութիւններին արհեստ սովորեցնել զործակատարներին, նրապատակ ունէին այդ կրթութիւնը պարտադիր դարձնել:

Նորերումս հեռագիրը հաղորդեց կոմս Սրնիմի մահուան լուրը, որ մի քանի ժամանակ վարում էր գերմանական զեսպանի պաշտօնը Փարիզի մէջ և որի գաղտնաստանական գործը իր ժամանակին մեծ ազմակ բարձրացրեց: Ինչպէս յայտնի է, նա եւթութարկված էր գաղտնաստանի դիպլոմատական դօւրմեւներ ծածկելու համար և նրա բացակայութեամբ մեղադրվեցաւ պետական դաւաճանութեան մէջ իշխան Բիսմարկի առաջը հաղածանքների շնորհիւ: Այնուհետեւ հանգուցեալը իր ամբողջ կեանքը աշխատում էր այդ մեղադրանքը մերժելու համար: Նա թողել է մի քանի գրուածքներ, որոնք երեւի կը հրատարակվեն: Նորերումս գերմանական կայսերական գաղտնաւորմը վճիռ կայացրեց կոմս Արնիմին թող տալ ազատ մուտք ունենալ Գերմանիայի

երկու նաւակները, որոնք լի են Կոլոմբոսի ընկերակիցներով: Նա ինքն յառաջ քան ցամաք կոխելը, քաղցր երանութեամբ աչքերը դարձնում է դէպի երկինք: Նրա երկտաւարը, բայց արդէն վաղաժամանակ աշխարհը դարդարված երեսի վրա, կարծես, գրված լինի անասման գոհութիւն նախախնամութեան, որ առաջինը ներշնչել է նրան նոր աշխարհ որոնելու միտքը և օգնել է իրագործելու այն: Նաւատորները, թերեւ նոքա, որոնք երբեմն, ահի և յուսահատութեան ազդեցութեան ներքոյ, կամենում էին ըստպանել նորան, այժմ խոնարհված ոտերին են համբուրում: Մի գոմարիկեան երկի, փրկի խաչելութիւնը ձեռքին, օրհնում է նոր աշխարհի սահմանը: Ընտելից երեւում են Կոլոմբոսի երեք նաւերը, որոնք խաղալի են ձգել ծովը: Ուղիւնաւոր թափանցիկ ջրերը, ուր այս նաւերը նշանակում են ինչպէս հայելու մէջ, պարզ կապոյտ երկինքը, չնորհալի ընտելեան հարուստ բուսականութիւնը, շքեղազարդ զգեստներով մարդիկը, որոնք պարտաւորում են արդէն ցամաք իջնելու, երկար և փառնաւոր նաւագնացութիւնից յետոյ, այս ամենը մի սքանչելի ներդաշնակութեամբ ամփոփված է տաղանդաւոր նկարչի գեղեցիկ պատկերի վրա: Տեսարանի շքեղութիւնը լրացնելու համար ծովի եղբայրն կանգնած են անտառի խորքերից զուրա պրծած տեղացի վայրենիները: Իսկ մի հնդկ շուտափոխ թիւփարելով, իր մակուղ ուղղում է դէպի ափը, նորա նորեկները կողմը՝ դարձած երեսը արտայայտում է դարմանք և ապշութիւն:

Պատկերի ensemble-ը այնքան գեղեցիկ է և

մէջ: Այդ վճիռը և կոմս Արնիմի մահը գրեթէ միաժամանակ պատահեցան:

Իշխան Բիսմարկի նորերումս դարձեալ մի անաջողութիւն ունեցաւ գերմանական պարլամենտի մէջ, որ ձայների նշանուոր մեծամասնութեամբ մերժեց նրա առաջարկած հարկը դարձրի վրա: Վարդապետից վերադառնալուց յետոյ կայսր Վիլհելմ առանձին ուշադրութիւն է դարձնում գլխուորական գործերի վրա: Նա մտադիր է անձամբ գլխուորական քննութիւնը կատարել, որ կը տեւի մինչև յունիսի կէսը:

Գերմանական զեսպան կոմս Հացֆելդին Գերմանիայի արտաքին գործերի մինիստրութեան քարտուղար նշանակելու մասին տարածված լուրերը դադարել են և քաղաքական շրջանները կասկածում են, որ այդ լուրերը ճիշդ լինեն: Կոմս Հացֆելդը վայելում է իշխան Բիսմարկի ուշադրութիւնը, որը նրան իր ամենաընդունակ աշխատակիցներից մէկն է համարում: Կ. Պոլսից ստացված լուրերը միաձայն ապացուցանում են, որ երբեք ոչ մի զեսպան այնպիսի ազդեցութիւն չէ ունեցել սուլթանի վրա, ինչպէս կոմս Հացֆելդը: Այդ պատճառով թէ գերմանական կառավարութիւնը և թէ սուլթանը ցանկանում են, որ կոմս Հացֆելդը որքան կարելի է շատ ժամանակ մնայ Կ. Պոլսի մէջ:

ԻՍՏԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Գիտութեան նպաստող ֆրանսիական ընկերութիւնը, իր 10-երորդ ժողովը ունի այս տարի Ալժիրիայում Լիւթ 1,500 անձինք ցանկութիւն են յայտնել մասնակցել այդ ժողովին և նայելով յայտարարութեան պրօգրամին ժողովը շատ հետաքրքիր է լինելու: Օտար հիւրերից ներկայ գտնվելու են՝ Լուսի օթէրկատօրիայի զիրկետոր Տակիլի, պ. պ. Սիմէն, Ուլիամ, Տոմսոն, Մէնդելեւի, Մադրուս, Վէնիսկով, Վադաուս, Ֆօլտ, Ազամս և շատ ուրիշներ: Նիտերը ըսկված են ապրիլից:

Ամերիկայի հանճարի նշանաբանը ինչպէս երեւում է մեքենաներ հնարելն է՝ «La Nature» լրագրի մէջ գտնում ենք ձի մաքրելու մի նոր մեքենայի նկարագրութիւնը: Այդ մեքենան շատ նման է այն մեքենային, որ գործ են ածում պարկեմաներները մաքրել խտակելու համար:

Սիրուն, որ դժուար թէ կարելի լինի նկատել նորա վրա մասնաւոր թերութիւններ: Նաւերը, ինչպէս լսեցի, նկարված են XV դարուց պահպանված բաւագոյն մօզէլներից և այնքան ընտիր են, որ կարող էին պատիւ բերել պատմական նկարչին եւ Կոլոմբոսի, նորա ուղեկիցներին կերպարանքը, առարկաների լուսաւորութիւնը և առնադրակ բոլոր մանրամասնութիւնները մշակված են այնպիսի վեճ ճարտարութեամբ, որ պատկերը պէտք է համարել կատարեալ կատարելական: Իր նմանը նա չունի ուրիշ տեղ: Մինչգետ ես այս տողերը գրում եմ, Լիւթում, անդլիացուց հասարակութիւնը խուռն բազմութեամբ յաճախում է Ալլապեանի աշխարհահանդէսը, որ Բոսիայից տեղափոխվեցաւ Անգլիայի Նորերումս լսեցի թէ անգլիացիք 30,000 բուրլի են առաջարկում մեր հայալի նկարչին, նորա Торжественное вступление Колумба на о. Сансальвадор պատկերի համար: Բայց նա առաջ կամենում է Ամերիկա տանել և յետոյ ծախել:

Եթէ ես հաւատացած լինեի թէ՛ իմ թոյլ զըրջովս կարողացայ գէթ մի փոքր զազաւար տալ մեր հասարակութեան Ալլապեանի տաղանդի և գեղարուեստական արտադրութեան մասին, ես ինչ բարոյապէս վարձարված կը համարելի. օտկայն կարծում եմ որ մօտ ապագայումս հասարակութիւնը ինքն էլ առիթ կունենայ անձամբ ստուգելու ասածներս: Վասն զի տարակոյս չը կայ, որ երբ օգոստոսին պ. Մադրիանցը լոյս կընծայէ մի քանի պատկերներ, մեր կովկասցի եղբայրները պարծանք կը համարեն դադարել իրանց առանձնատեսակները և զահլիճները հա-

Այդ գործիքի շարժողութեան արագութիւնը հասնում է մի բալկում 500 պտոյտի:

Այս օրերս Փարիզում յայտարարվեցաւ օրիորդ Հինրիկտա Պաւստօվոյտովի մահվան մասին, որ լեհական ապստամբութեան ժամանակ երկելի յեղափոխական Լանգելիչի աղիւտանտի պաշտօն էր վարել: Օրիորդ Պաւստօվոյտով պատկանում էր յայտնի ընտանիքին և 1863 թւի լեհական ապստամբութեան ժամանակ նա տղամարդու շորերով, իրեն Լանգելիչի աղիւտանտ, ամեն տեղ ձիով հետևում էր նրան: Երբ ապստամբութիւնը ճնշվեցաւ, նա անհետացաւ և մինչև այժմ ոչոք ոչինչ չը գիտեր նրա մասին: Մահվան յայտարարութիւնից միայն իմացվեցաւ, որ նա մինչև այժմ կենդանի էր և բնակվում էր Փարիզում:

Հիւսիսային Ամերիկայի նահանգներում մի մասնաւոր անձ 10,000 դոլար պրէմիա էր նշանակել ամենագեղեցիկ կնոջ համար, որի գեղեցկութիւնը կորոշի գրա համար կազմված առանձին մասնագիտով: Բոլոր կանանցից ամենագեղեցիկը գտնվեցաւ Իւլի-Խօրկում, Լուիզա Մօնտան, որը և ստացաւ մրցանակը: Կա դերասանուհի էր մի գաւառական քաղաքում, խուռի հետ միասին չրջել էր ամբողջ Միացեալ-Նահանգները և վերջը պտակվել էր մի դերասանի հետ, բայց պտակը քանդվեցաւ, որովհետեւ գեղեցկուհու մարդը ծախել էր նրան մի հարուստ իղթախաղացին 60 դոլարով: Լուիզա Մօնտան մի բարձրաստակ, գեղեցիկ կազմված կին է, նրա մազերը սպիկ պէս սև են, աչքերը կապոյտ, երկար, սև խիտ թերթերունքներով, և նոյնպէս սև, խիտ յօնքերով, երեսի գոյնը մարմարոնի պէս սպիտակ է, այնպէս որ նա իրաւ կարող է համարվել ամենագեղեցիկ կին և իզուր չէ նրա ստացած պրէմիան:

Այս օրերս Աղէլինա Պատտի, ուղեորվելով դէպի իր կալուածքը, կը մնայ մի քանի օր Լիւթում և մայիսի 21-ին բեմ դուրս կը գայ Ալմիրամիդի դերին մէջ: Լսվում է որ Պատտի մի տարուց յետոյ բեմը բոլորովին թողնելու է, բայց այդ քայլը անելուց առաջ նա դիտաւորութիւն ունի այցելել բոլոր եւրօպական մայրաքաղաքները մի մի հրաժարական ներկայացում տալով և վերջը Սարա Բէրնարի օրինակին հետեւելով մի քանի ամիս կանցկացնի Ամերիկայում:

Իմրագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

յազն երեկի նկարչի հիանալի պատկերներով վերջիններս գնեցը չափազանց մատչելի են: ցանկալի կը լինէր որ Հայոց ուսումնարաններում էլ գտնվէին մի քանի հատերը... վասն զի եթէ Վարդան Մամիկոնեանի լուսանկարը կարող է ազգասիրութեամբ ոգեւորել հայ մանուկներին, Ալլապեանի պատկերները, իրեն կենդանի օրինակ հայկական հանճարի և ընդունակութեան, ոչ ոսկաւ էստէտիկական նուրբ ճաշակ կը զարգացնեն նոցա մէջ և հաւատ կը ներշնչեն նրանց դէպի իրանց յատուկ ոյժերը: հայ պատանին պիտի ճանաչէ վերջապէս իր ազգի բնական ձիւքերը և վայելելով մասամբ մեր ժամանակակից մեծանուն հայրենակիցների մտաւոր գաժ փառքը, նա պիտի ընտելանայ նայել նոցա վրա ոչ իրեն բացառական, այլ իրեն հայոց համար սովորական երեւոյթների վրա: երբ այսպիսի կարծիք կը հաստատվի մեր մէջ, այն ժամանակ մենք իրաւունք կունենանք համարձակ նայելու ապագայի վրա:

Անձամբ իմանալով մեծ պ. Մադրիանցի ազգասիր եռանդը, քաջայայտ եմ, որ նա կը բարեհաճէ զիջումն անել հայոց զարդներին յայտարարութեան մէջ որոշված գնեքից: Ի բոլոր սրտէ աջողութիւն եմ մտղթում յարգելի հրատարակչին նորա գեղեցիկ ձեռնարկութեան մէջ:

Ս. Պետերբուրգ. Խ. Ենգիբարեան

Սան-Սալվադոր: *) Անա ամին մօտենում են
*) Ար. փրկութիւն: